ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «31» հուլիսի 2017թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Արման Հարությունյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Էլլադա Արզաքանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Դավիթ Թովմասյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի մասնագետ:

1. **Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/03» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին.**

Գնահատող հանձնաժողովի նիստին ներկա էին գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցություններին հրավիրված բոլոր մասնակիցները: Հանձնաժողովը որոշեց գների նվազեցման շուրջ կազմակերպել բանակցություններ՝ բանակցությունների համար սահմանելով 30/երեսուն/ րոպե ժամանակ.

1.1 Կազմակերպված բանակցությունների արդյունքում՝ մինչև բանակցությունների համար սահմանված ժամկետի ավարտը՝ Մասնակիցները հրաժարվեցին նվազեցնել 1-ին և 3-րդ չափաբաժիններով ներկայացված գնային առաջարկները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. **Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**
Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.
2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Կոմպասս» ՍՊԸ-ին.

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. **Տեղեկատվություն՝ ընթացակարգը 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.**
   - ✓ 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին).

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.
հատատել <<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/03>> ծածկագրով շրջանակային համաձայանգրերով գնում կատարելու ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. **Հանձնաժողովի քարտուղարին.**
Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը
1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,
2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017թ. օգոստոսի 03-ը ներառյալ ներկայացնել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2017թ. օգոստոսի 04-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Է. Տոնականյան

(ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

Խ. Պետրոսյան

(ստորագրություն)

Ա. Հարությունյան

(ստորագրություն)

Ա. Ալիխանյան

(ստորագրություն)

Է. Արզաքանյան

(ստորագրություն)

Գումմերը համակարգող՝
Դ. Թովմասյան

(ստորագրություն)